

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Պարտադիր ժամկետային զինծառայող Տիգրան Բենիկի Համբարձումյանի մահվան հանգամանքների և դրանց քննության վերաբերյալ

ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ ՏԻԳՐԱՆ ԲԵՆԻԿԻ

Զորակոչվել է 2009թ. դեկտեմբերի 26-ին Մասիսի զինկոմիսարիատից Ծառայության է անցել ՀՀ ՊՆ թիվ 54809 զորամասում /Սյունիքի մարզ/

1. Մահվան պատճառների պաշտոնական վարկածը.

2011թ. հունիսի 28-ին ժամը 18:30-ի սահմաններում զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող Տ.Համբարձումյանը ինքնակամ լքել է զորամասը: Որոնողական աշխատանքների արդյունքում զինծառայողի դիակը հունիսի 29-ին ժամը 13:15-ին հայտնաբերվել է զորամասից մոտ 100 մետր հեռավորության վրա՝ դեմքի և պարանոցի հյուսվածքների բացակայությամբ: Դեպքի վայրի զննությամբ դիակից մոտ 16մ հեռավորության վրա ծառի տակ հայտնաբերվել է 140x80սմ չափի արնանման հետք, որից մոտ 3մ հեռավորության վրա <<ՌԱՊԻՐԱ>> տեսակի ածելի, իսկ դիակի զննությամբ ձախ ձեռքի արմնկափոսի շրջանում առկա է լայնակի վերք 7-8սմ չափի հարթ եզրերով 1.5x2սմ խորությամբ

Փաստի առթիվ ՀՀ քր. օր-ի 110 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով (*Ինքնասպանության հասցնելը*) հարուցվել է քրեական գործ: Ներկայումս սույն քրեական գործով մեղադրյալներ և կասկածյալներ չկան:

2. Մահվան պատճառների դիմումատուի վարկածը.

Ըստ Տիգրան Համբարձումյանի հոր՝ Բենիկ Համբարձումյանի, իր տղայի սպանությունը կատարվել է պարանոցի հատվածից, իսկ հետագայում հետքերը թաքցնելու նպատակով ձախ ձեռքի արմնկափոսի շրջանում առաջացրել են վնասվածք, որը դիմումատուի պնդմամբ կատարվել է ոչ թե ածելիով, այլ դանակով:

Ինքնասպանության փաստը բացառելով, դիմումատուն գտնում է, որ կատարվել է դիտավորյալ սպանություն:

3. Գործի քննությունը ներկայումս հետևյալ փուլում է.

Ներկայումս քրեական գործը գտնվում է նախաքննության փուլում, այն ավարտված չէ:

4. Գործի քննության /հետաքննության, նախաքննության, դատաքննության և այլն/ ընթացքում տեղ գտած թերացումները, ըստ դիմումատուի.

- Մինչև դեպքը, հավաստի տեղեկություններով, զորամասում Տ. Համբարձումյանի և գործով չպարզված անձանց միջև տեղի է ունեցել վիճաբանություն, սակայն վարույթն իրականացնող մարմինը այդ հանգամանքին չի անդրադարձել,

- անհասկանալի է այն, որ դիակը գտնվել է զորամասից ընդամենը մի քանի մետր հեռավորության վրա տեսանելի վայրում, սակայն զորամասի սպայական կազմը Տ. Համբարձումյանի դին հայտնաբերել է դեպքից մեկ օր անց,

- Տ. Համբարձումյանին սպանել են մեկ այլ վայրում և հետագայում տեղափոխել այլ վայր, որին քննիչը նույնպես չի անդրադարձել,

- մահից առաջ, վերջին անգամ գործով վկա Արարատ Ճնգրյանի և Տիգրան Համբարձումյանի հեռախոսազրույցը պատշաճ կարգով քննարկման առարկա չի դարձել,

- հանգուցյալը չէր կարող իրեն վնասելուց նման հորիզոնական դիրքով մնալ պառկած:

5. Դիմումատուի առաջարկները քննության բավարար արդյունքներ ստանալու համար.

Ինքնասպանության հասցնելու հատկանիշներով հարուցված քրեական գործը վերաորակել որպես դիտավորյալ սպանություն,

Ձեռնամուխ լինել մեղավորներին հայտնաբերելու և համարժեք պատիժ նշանակելու ուղղությամբ,

Նախաքննության առարկա դարձնել բոլոր տեսակի մանրամասնությունները, գործի լրիվությունն ու օբյեկտիվությունը ապահովելու նպատակով:


6. Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկները ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներին

- Հարցապնդմամբ դիմել ՀՀ զինվորական դատախազին՝ կատարվող նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողությունը ուժեղացնելու նպատակով:


- Հարցում կատարել ՀՀ ՊՆ Ռազմական ոստիկանության վարչության պետին՝ օպերատիվ հետախուզական աշխատանքները ակտիվացնելու, ինչպես նաև դեպքի բոլոր մանրամասներն ու հանցանք կատարած անձանց հայտնաբերելու ուղղությամբ իրականացրած միջոցառումների մասին:

Ծանոթագրություն: Սույն տեղեկանքում ներկայացված վարկածները, ենթադրությունները, եզրակացությունները, պնդումներն ու առաջարկությունները, բացառությամբ սույն տեղեկանքի 6-րդ կետում ներկայացվածների, չեն կարող որևէ դեպքում ներկայացվել որպես ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գնահատականներ կամ դիրքորոշումներ:

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ՝


ԿՐԵՆ ԱՆԴԻՄՈՎՅԱՆ

ԴԻՄՈՒՄԱՏՈՒ՝


ԲԵՆԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
(Տիգրան Համբարձումյանի հայրը)